Արձանագրություն N 2
<<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման գործընթացի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 28.06.2017 թ.
ժ. 14:30

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյանը, |
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Հովսեփյանը /գնահատող/, |
| | Օ. Կարապետյանը /գնահատող/, |
| | Գ. Խաչատրյանը /բացող/, |
| | Ա. Չավուշյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը: |

1.Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ա. Նազարեթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

ա)

| Գնման առարկայի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|
| Չափաբաժնի համարը | Ընդհանուր գինը | 2017 թ. նախատեսված հատկացման չափը |
| 1 | 13000000 | 7000000 |
| 2 | 10000000 | 5000000 |
| 3 | 8000000 | 2000000 |
| 4 | 6000000 | 6000000 |

բ) Գնանշման հարցման հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Հասցե | |
|---|---|---|---|
| | | էլեկտրոնային | Գրանցման |
| 1 | <<Հայնախագիծ>> ԲԲԸ | info@armproject.am | ք. Երևան, Չարենցի 1 |
| 2 | <<Երևաննախագիծ>> ՓԲԸ | yerpro@yandex.ru | ք. Երևան, Բուզանդի 1/3 |
| 3 | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | info@nuaca.am | ք. Երևան, Տերյան 105 |

գ) <<Հայնախագիծ>> ԲԲԸ և <<Երևաննախագիծ>> ՓԲԸ կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

դ) Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի կողմից ներկայացված հայտում բացակայում է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը,

ե) Մասնակիցների կողմից առաջարկած գները հետևյալն են.

| հ/հ | Մասնակցի անվանումը | Գնի առաջարկը ըստ չափաբաժինների (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | I չափաբաժին | II չափաբաժին | III չափաբաժին | IV չափաբաժին |
| 1 | <<Երևաննախագիծ>> ՓԲԸ | - | - | 6833000 /առանց ԱԱՀ-ի/ | 4916667 /առանց ԱԱՀ-ի/ |
| | | | | 1366667 / ԱԱՀ/ | 983333 / ԱԱՀ/ |
| | | | | 8200000 /Ընդհանուր գինը/ | 5900000 /Ընդհանուր գինը/ |
| 2 | <<Հայնախագիծ>> ԲԲԸ | - | - | 6500000 /առանց ԱԱՀ-ի/ | 5166667 /առանց ԱԱՀ-ի/ |
| | | | | 1300000 / ԱԱՀ/ | 1033333 / ԱԱՀ/ |
| | | | | 7800000 /Ընդհանուր գինը/ | 6200000 /Ընդհանուր գինը/ |
| 3 | Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան | 10500000 /առանց ԱԱՀ-ի/ | 8000000 առանց ԱԱՀ-ի/ | - | - |
| | | 2100000 / ԱԱՀ/ | 1600000 / ԱԱՀ/ | | |
| | | 12600000 /Ընդհանուր գինը/ | 9600000 /Ընդհանուր գինը/ | | |

1.2 Մերժել Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

- Ներկայացված հայտում բացակայում է մասնակցության հայտի ապահովման վճարման պահանջագիրը.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

**2. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն առաջին և երկրորդ չափաբաժինների մասով չկայացած հայտարարվելու մասին**

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1) ենթակետը <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգն առաջին և երկրորդ չափաբաժինների մասով հայտարարել չկայացած հետևյալ հիմնավորմամբ.

- Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

3. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Ա. Զանգակցյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց երրորդ և չորրորդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին.

- 3-րդ չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Հայնախագիծ>> ԲԲԸ -ին,
- 4-րդ չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

## 4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին ծանուցելու մասին

(Ա. Զանջուղազյան)

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.

- Ծանուցել առաջին տեղերը զբաղեցրած մասնակցներին առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ իրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

## 5. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Զանջուղազյան)

5.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 7-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի նախագահ — Ա. Նազարեթյան

Անդամ — Ա. Հովսեփյան

Օ. Կարապետյան

Գ. Խաչատրյան

Ա. Չավուշյան

Քարտուղար՝ — Հ. Ավետիսյան

# Արձանագրություն N 2.1
## <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

11.07.2017 թ.
ժ. 16:30

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյանը, |
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Հովսեփյանը /գնահատող/, |
| | Օ. Կարապետյանը /գնահատող/, |
| | Գ. Խաչատրյանը /բացող/, |
| | Ա. Չավուշյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը: |

### 1.Գնանշման հարցման հայտերի բացման մասին /շարունակություն/
(Ա. Նազարեթյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

1.1 Ներկայացրած հայտերի մանրամասն ուսումնասիրության ժամանակ պարզվել է, որ <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի հայտում ներառված գնային առաջարկի /Հավելված 4/ երրորդ սյունում /Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)/ և չորրորդ սյունում /ԱԱՀ/ արժեքը և ԱԱՀ-ն ներկայացված են միայն թվերով, բացակայում են հրավերով պահանջվող՝ տառերով գրառումները:

1.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետը <<Հայնախագիծ>> ԲԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.3 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետը՝ չեղյալ հայտարարել գնահատող հանձնաժողովի կողմից 28.06.2017 թ. N2 արձանագրության 3-րդ և 4-րդ կետերը.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 2. Գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին
(Ա. Նազարեթյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասը և ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշեց երրորդ և չորրորդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցրած մասնակցին.

- 3-րդ և 4-րդ չափաբաժնի համար առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

## 3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Ա. Նազարեթյան)

3.1 Համաձայն ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հանձնաժողովը որոշեց.

- Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը,
- Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ին, առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0

## 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Նազարեթյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2017 թվականի հուլիսի 18-ին, ժամը՝ 16:00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի նախագահ — Ա. Նազարեթյան

Անդամ — Ա. Հովսեփյան

Օ. Կարապետյան

Գ. Խաչատրյան

Ա. Չավուշյան

Քարտուղար՝ — Հ. Ավետիսյան

## Արձանագրություն N 2.2
### «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 18.07.2017 թ.
ժ. 16:00

Մասնակցում էին.

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյանը, |
| Հանձնաժողովի անդամներ | Ա. Հովսեփյանը /գնահատող/, |
| | Օ. Կարապետյանը /գնահատող/, |
| | Գ. Խաչատրյանը /բացող/, |
| | Ա. Չավուշյանը /բացող/, |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը: |

1. Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի **ներկայացման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր** <u>**պետական եկամուտների կոմիտե** ուղված հարցման պատասխանի ստացման մասին</u>

(Ա. Նազարեթյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ.

- «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար առաջին տեղ զբաղեցնող մասնակից <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ն իրավերով սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը,

- Գնահատող հանձնաժողովի 11.07.2017 թ. 3.1 կետով նախատեսված հարցման պատասխանը ստացվել է իրավերով սահմանված ժամկետում. համաձայն որի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ.
- ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն չունի,
երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը պակաս չէ ներկայացված գնային առաջարկից,
- Հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքին:
- <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի կողմից 3-րդ չափաբաժնի համար առաջարկած գինը գերազանցում է նախատեսված հատկացման չափը:

1.2 Հիմք ընդունելով 1.1 կետի վերջին պարբերությունը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը, ծանուցել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ -ին և հրավիրել ներկայանալու գնային առաջարկի նվազեցման բանակցությունների, որը տեղի է ունենալու ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի գնումների բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում) 2017

թվականի հուլիսի 21-ին ժամը 15:30-ին կայանալիք <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյան |
| Անդամ | Ա. Հովսեփյան |
| | Օ. Կարապետյան |
| | Գ. Խաչատրյան |
| | Ա. Չավուշյան |
| Քարտուղար՝ | Հ. Ավետիսյան |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МЭРИЯ ГОРОДА ЕРЕВАНА

**«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ**

**ЗАО "ЕРЕВАНПРОЕКТ"**

0010.Երևան-10. Փ.Բուզանդի փող.N1/3 Հեռախոս 56-27-11 0010. Ереван-10, ул.П.Бузанда N1/3

25.07.2017 №

Ձեր №

## ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

«Երևաննախագիծ» ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Ս.Օհանյանի, լիազորում է ընկերության իրավա-պայմանագրային և ծրագրերի բաժնի պետ Հեղինե Ոսկանյանին (անձնագիր №AM 0679508, 003, 04.04.2012թ.) ընկերության անունից մասնակցելու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից կազմակերպվող ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1 ծածկագրով Գնանշման հարցման բանակցային գործընթացին:

ՏՆՕՐԵՆ Ս.ՕՀԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

ԱԶԳԱՆՈՒՆԸ

ՈՍԿԱՆՅԱՆ

ՍԵՌԸ

Ի

ԱՆՈՒՆԸ

ՀԵՂԻՆԵ ՄԿՐՏԻՉԻ

ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԾՆՎԵԼ Է
04.06.1968

ԾՆՆԴՅԱՆ ՎԱՅՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՏՐՎԵԼ Է
04.04.2012

ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻՆՉԵՎ
04.04.2022

ՈՒՄ ԿՈՂՄԻՑ
003

ԱՆՁՆԱԳՐԻ ՏԻՐՈՋ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ/SIGNATURE OF HOLDER

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ REPUBLIC OF ARMENIA

PASSPORT

TYPE
P

COUNTRY CODE
ARM

PASSPORT No.
AM0679508



SURNAME(S)
VOSKANYAN

NAME
HEGHINE

NATIONALITY REPUBLIC OF ARMENIA

DATE OF BIRTH
04 JUN 1968

PERSONAL No.

SEX
F

PLACE OF BIRTH
REPUBLIC OF ARMENIA

DATE OF ISSUE
04 APR 2012

DATE OF EXPIRY
04 APR 2022

AUTHORITY
003

P<ARMVOSKANYAN<<HEGHINE<<<<<<<<<<<<<<<<<<<<<

AM06795081ARM6806042F2204042<<<<<<<<<<<<<<00

## Արձանագրություն N 2.3
## <<ՀՀԲՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21.07.2017 թ.
ժ. 15:30

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյանը, |
| Անդամ | Ա. Հովսեփյանը /գնահատող/, |
| | Օ. Կարապետյանը /գնահատող/, |
| | Գ. Խաչատրյանը /բացող/ |
| | Ա. Չավուշյանը /բացող/ |
| Հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյանը |
| <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի իրավապայմանագրային և ծրագրերի բաժնի պետ | Հեղինե Ոսկանյանը |

### 1. Գնային առաջարկի նվազեցման բանակցություններ վարելու մասին
(Ա. Նազարեթյան)

1.1 Գնային առաջարկի նվազեցման բանակցություններ վարելու համար սահմանել 10 րոպե ժամանակ, սկսած ժամը 15:40-ից.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1.2 Ընդունել ի գիտություն, որ գնային առաջարկի նվազեցման բանակցություններ վարելու համար սահմանված 10 րոպե ժամանակահատվածում <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի ներկայացուցչի կողմից գնային նոր առաջարկ չի եղել:

1.3 Հանձնաժողովի սույն նիստն ընդհատել մինչև 25.07.2017 թ. ժամը 15:30-ը.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյան |
| Անդամ | Ա. Հովսեփյան |
| | Օ. Կարապետյան |
| | Գ. Խաչատրյան |
| | Ա. Չավուշյան |
| Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյան |
| <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի իրավապայմանագրային և ծրագրերի բաժնի պետ | Հեղինե Ոսկանյան |

# Արձանագրություն N 3

## <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

25.07.2017 թ.
ժ. 15:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ — Ա. Նազարեթյանը,
Անդամ — Ա. Հովսեփյանը /գնահատող/,
Օ. Կարապետյանը /գնահատող/,
Գ. Խաչատրյանը /բացող/
Ա. Չավուշյանը /բացող/
Հանձնաժողովի քարտուղար — Հ. Ավետիսյանը

### 1. Հայտի /որոկավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի/ գնահատման արդյունքները

(Ա. Նազարեթյան)

1.1 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի հայտի գնահատման արդյունքը.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Հայտի գնահատականը |
|---|---|---|
| 1 | <<Երևաննախագիծ>> ՓԲԸ | Բավարար |

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 2. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը երրորդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարվելու մասին

(Ա. Նազարեթյան)

2.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1) ենթակետը ինչպես նաև գնահատող հանձնաժողովի 21.07.2017 թ. նիստի արձանագրության 1.2 կետը՝ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը երրորդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած հետևյալ հիմնավորմամբ.

- Հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.

Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ – 0:

### 3. <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/2>> ծածկագրով գնման ընթացակարգն չորրորդ չափաբաժնի մասով ընտրված մասնակցի մասին

(Ա. Նազարեթյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1 կետով ընդունված որոշումը և <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/1>> ծածկագրով գնման գործընթացի չորրորդ չափաբաժնի համար ընտրված մասնակից հայտարարվել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ ին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Աշխատանքների կատարման պետական պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Նազարեթյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3.1 կետով ընդունված որոշումը.

- «Բնակչության սակավաշարժուն խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման նախագծման կանոնների հավաքածու» ՀՀ շինարարական նորմերի կանոնների հավաքածուի մշակման (տեղայնացման) աշխատանքների կատարման պայմանագիր կնքել <<Երևաննախագիծ>> ՓԲԸ-ի հետ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Նազարեթյան |
| Անդամ | Ա. Հովսեփյան |
| | Օ. Կարապետյան |
| | Գ. Խաչատրյան |
| | Ա. Չավուշյան |
| Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար | Հ. Ավետիսյան |